Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն
հասցե՝ 0001, Երևան, Մոսկովյան փող., 3/1 շենք
www.acses.am | էլ.հասցե՝ info@acses.am | հեռ.՝ +374 99 041168

Քաղաքականության համառոտագիր

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի

2020թ-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի արդյունքում Հայաստանի զինված ուժերի (ներառյալ կամավորականների և պահեստազորայինների) շարքում արդեն իսկ առկա են 1000-ից ավել զոհեր և բազմաթիվ վիրավորներ: ACSES վերլուծական կենտրոնը գնահատել է մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ միանվագ վճարների և 2021-2040 թթ «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի ամենամսյա վճարների գծով պարտավորությունների մեծությունը: Արդյունքում պարզել, որ պարտավորությունները լիարժեք կատարելու համար անհրաժեշտ է վերափոխել հիմնադրամի համալրման գործող մեխանիզմը, իսկ կարճաժամկետում պարտավորությունները լիարժեք և ամբողջ ծավալով կատարելու համար՝ ներգրավվել փոխառու միջոցներ: Սույն համառոտագրում հակիրճ ներկայացնում ենք մեր հաշվարկների համար հիմք հանդիսացած ֆինանսական մոդելի արդյունքները:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) պետք է հատուցի մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասները: 2017թ-ի հունվարի 1-ից կատարվող պարտադիր (1000 դրամ) և կամավոր նվիրատվությունների արդյունքում, ներկայումս Հիմնադրամի ակտիվների մեծությունը գնահատվում է մոտ 30 մլրդ դրամ, իսկ ոչ ընթացիկ պարտավորությունների ընդհանուր մեծությունը՝ շուրջ 6 մլրդ դրամ:

ACSES վերլուծական կենտրոնի գնահատականներով այս պատերազմի հետևանքով շահառուների քանակը կարող է աճել մոտ 10800-ով , Հիմնարդամի միանվագ հատուցումների ընդհանուր մեծությունը կարող է հասնել մոտ 85.6 մլրդ դրամի, իսկ առաջիկա 20 տարիների ընթացքում ամսական վճարների գծով պարտավորությունների ընդհանուր մեծությունը կարող է հասնել 468 մլրդ դրամի: Դա նշականում է, որ Հիմնադրամի միջոցները բավարար չեն պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու համար, և հետևաբար առաջանում է անհրաժեշտություն `

(1) ներգրավվել փոխառու միջոցներ կարճաժամկետում պարտավորությունները լիարժեք և ամբողջ ծավալով կատարելու համար,

Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն
հասցե՝ 0001, Երևան, Մոսկովյան փող., 3/1 շենք
www.acses.am | էլ.հասցե՝ info@acses.am | հեռ.՝ +374 99 041168

(2) վերափոխել Հիմնադրամի համալրման գործող մեխանիզմը՝ կտրուկ ավելացնելով դրամական միջոցների ներհոսքը:

Այս նպատակներով ACSES վերլուծական կենտրոնն առաջարկում է.

(1) Փոխառու միջոցներ ներգրավելու համար դիտարկել ՀՀ ԿԲ-ից 0% տոկոսադրույքով փոխառություն ներգրավելու հնարավորությունը: Մեր գնահատականներով պահանջվող գումարի մեծությունը կկազմի շուրջ 47 մլրդ դրամ, որը հնարավոր կլինի մարել 2022-2030թթ-ի ընթացքում:

(2) Հիմնադրամի դրամական ներհոսքը կտրուկ ավելացնելու նպատակով՝ 2021թ-ի հունվարի 1-ից սահմանել 1.5% «համերաշխության հարկ» (solidarity tax) ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության և դրանից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտների հետևյալ տեսակների հարկման բազայի նկատմամբ ՝

- Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ,
- Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում իրականացվող գործունեությունից ստացվող դրամական կամ բնաիրային եկամուտներ,
- Շահաբաժին (այդ թվում անհատ ձեռնարկատիրոջ անձնական եկամուտը),
- Տոկոս,
- Վարձակալական վճար,
- Ռոյալթի,
- Ակտիվների արժեքի հավելաճ:

Ընդ որում, հաշվի առնելով հարկային իրավահարաբերությունների ընթացիկ կարգավորումները՝ առաջարկում ենք Հարկային Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն միկրոձեռնակրատիրության սուբյեկտ հանդիսացող անձանց համար սահմանել տարեկան վճար՝ 36 հազ. դրամի, նոտար հանդիսացող անձանց համար՝ 60 հազ. դրամի չափով:

Մեր կազմած ֆինանսական մոդելը ցույց է տալիս, որ ամենամսյա վճարների գծով Հիմնադրամի տարեկան պարտավորությունների ընդհանուր մեծությունը կարող է հասնել 23.7 մլրդ դրամի (ներառյալ նախորդ ժամանակահատվածից ունեցած պարտավորությունները), իսկ «համերաշխության հարկից» դրամական ներհոսքի մեծությունը 2021-2040թթ-ի կկազմի նվազագույնը 23.7 մլրդ դրամ (2021թ.) և մինչև 2031թ-ը կհասնի 47.4 մլրդ դրամ:

ACSES վերլուծական կենտրոնը իր պատրաստակամությունն է հայտնում մասնակցելու Օրենքի փոփոխությունների նախագծի քննարկմանը և ներկայացնելու հաշվարկների հիմք հանդիսացող ֆինանսական մոդելը: